

գրութեան նորա յԱրքեպիսկոպոսութիւն տանն Սիւնեաց. ըստ այսմ զԹագ նկարելն ի պատկերս ի գլուխ սուրբ Լուսաւորչին եւ որդւոց եւ թոռանց նորա եւ այլոց Հայրապետաց ազգիս ցկոստանդին Ա. Կաթողիկոսն՝ այն է ցամ Տեառն 1239 ըստ ամենայնի Հակառակ է սովորութեան եկեղեցւոյն մերոյ, եւ բոլորովին իսկ սխալ *) որ յայտնի երեւի թէ ի յետին ժամանակս տգիտութեան ի կողմն պապականութեան Հակեալ գոլով բազմաց նկարչաց՝ ներմուծեալ է այս սովորութիւն պատկերագրութեան յեկեղեցին մեր եւ մինչեւ անգամ գտանին եւ ի Տաճար սուրբ Էջմիածնի:

ՄԵՍՐՈՎԷ ԵՊԻՍԿՈՍՈՍ.

ԲՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ.

Գիտութեան մեծութիւնը՝ որով այժմ՝ մարդկութիւնը հպարտանում է, նոր չէ. խորին հնութեան մէջ նորա ընծիւղը հանդիպում է ծաղրական ժպտի կամ հաշտման. Արիստոտելի նման մէկը ստիպուած էր փախչել իւր հայրենիքից մօտահաս մահից ազատուելու համար. Իմաստասէր Սոկրատը իւր իմաստութեան վարձատրութիւն — մի բաժակ լոյն ստացաւ. Նոյն իսկ այժմ Սոկրատի վարդապետութեան հեռեզնիքին ծաղրում են և կամ հաշտում են: Բայց սորանով չէ կարելի արգելք լինել գիտութեան յառաջդիմելուն, որը իւր փորձերի ու եզրակացութիւնների մէջ անաշտ է. Նա արհամարհում է արտաքին պատուարները և չէ հրաժարում ոչ մի եզրակացութիւնից: Արեմն պարտական ենք շատ գնահատել նորան և ընդունել նորա ճշմարտութիւնները, որոնք ստուգուած են ժամանակակից իմաստուն խելքերով. պարտական ենք պաշտպանել նորա ճշմարիտ օրէնքները, իրրեւ մեր ամենալաւ համոզումներ, իրրեւ մեր միակ ամենաթանկ և մոխթարիչ կարողութիւն:

(*) Սխալ է նմանապէս և ի պատկերի նկարեալ մկրտութիւն Տրդատայ թագաւորին Հայոց և թագուհւոյն ի ձեւ պապականութեան. քանզի սուրբ Լուսաւորչին մկրտեաց զՏրդատ արքայն և զամենայն ընտանիս նորա յԵփրատ գետ, որպէս բացայայտ գրէ քաջ ատենադպիրն Տրդատայ արքայի Ագաթանգեղոս և այլ բազում պատմադիրք. իսկ փոքրիկ ջրոյ բաժակաւ ջուր ընուն կամ սրսկին ի վերայ զլոյս մկրտելոյն և այն կերպիւ նկարելն՝ նոյն իսկ սովորութիւն է պապականաց և բոլորովին հակառակ է կանոնաց և սահմանադրութեանց Հայաստանեայցս սուրբ Եկեղեցւոյ, և ոչն ևս նկարեալ է ի պապամոլ տգէտ պատկերահանաց ի յետին ժամանակս, որք սովոր են զամենայն նկարեալ պատկերս ձեռնութեղ յիւրեանց սովորութիւն, որպէս տեսանի ի բազումս:

Անցած զարերը հարուստ էին լաւ հետազօտութիւններով, միշտ կային այնպէսի մարդիկ, որոնք շատ զգուշ նկատում էին երեւոյթները և հաւաքում փաստեր, բայց շատ սակաւ էր յաջողվում նոցա հասնել աներկբայ եզրակացութիւններին։ Սակայն մեր 19րդ դարը հարուստ է պաղարեր եզրակացութիւններով, որոնք յիմած են ճշմարիտ օրէնքների և ուղիղ Գաղափարների վերայ։ Ահա այսպիսի եզրակացութիւններին վերաբերում է գործարանաւոր բնութեան մէջ Գործիչի նկատած բնական ընտրութիւնը։

Ի զուր համոզում ենք, որ գտնուում ենք Եւրոպական լուսաւորութեան աստիճանի վերայ, որովհետեւ ժողովրդի մասւոր զարգացման շափը և ոյժը որոշում է ոչ թէ մեռած անստղծ փաստերով, այլ ճշմարիտ և զօրեղ եզրակացութիւններով։ Բայց սորա վերաբերմամբ մենք ի՞նչ նոր բան մտցրած ենք բարդական գիտութեան ընդհանուր գանձարանի մէջ։ Բարբոսին ոչինչ։ Արդիօր մինչև այժմ յայտնած ենք մի սրկիցէ նշանաւոր եզրակացութիւն Եւրոպական մտքի ընդհանուր անտեսութեան մէջ։ Ոչինչ։ Սակայն մեղանում ոչ թէ մի որ և իցէ բանի լիննաստեղծութիւն չէ երևում, այլ և Եւրոպական գիտութիւնը մեզ կամաց և ուշ ենք յատկացնում։

Նայեցէք թէ ժողովուրդը ի՞նչ ծագածութեամբ, անտրդանքով և թշնամութեամբ լսում ամեն մի նոր գաղափար, որը արեւմուտքում վաղցից որդէն լուծված է լինում, և թէ այս ընդհանուր անտրքերութեան միջից երևում են ազատ խորհող և Եւրոպական գիտութեան հետեւող մի որ և իցէ անձն, սորա դրութիւնը անմասնանձելի և խղճալի է, մի խօսքով նա ժողովրդի մէջ այն նշանակութիւնն է ունենում, ինչ որ աղամանդը աղբի մէջ արջօրի համար։ Այժմ հասկանալի է, բանի որ ընդհանրութիւնը այս գրութեան մէջ է, նա չէ կարող գործնականապէս իւրացնել Եւրոպական գաղափարները։ Այժմ ցոյց տանք, թէ օրքան ժողովուրդը սորանից փնտաւում։

Վարժմուածքի (организация) ամեն մի կատարելագործութիւնը, որը օգտու է բերում կենդանիին, բար, որքան նորա գոյութիւնը, երկարացնում է նորա կեանքը կամ լաւ ևս է տեսել անփնաս է պահում նորան արտաքին հանգամանքների փնտաւոր ազդեցութիւնից, որը օգտակար է ոչ միայն մասնաւորապէս մեզ համար, այլ նոյն իսկ անասունների, թէև նոքա լրիւ չեն զգում այդ, մենք իրաւունք ունինք անուանելու յառաջադիմութիւն կենդանիների մէջ, ի թիւս որոց և մարդը։ Եթէ ընդունենք որ կեանքը նպատակ ունի, նոյնը պէտք է տեսել և բոյսերի համար, բայց եթէ ի նկատի ունենանք, որ կենդանական աշխարհի արարածները ընդունակ են շօշափելու, այն ինչ բոյսերը զուրկ են այս յատկութիւնից, մեզ դժուար է որոշել թէ ի՞նչ է յառաջադիմութիւնը բոյսերի մէջ։ Գործիչը թողնում է այս հարցը, մենք ևս չենք կարող լրացնել Գործիչի թողածը։ Բայց կարեւոր ենք համարում այստեղ յիշել, որ մենք հիռու ենք բնաւ փիլիսոփայական տեսակետից, որ բնութեան մէջ ամեն բան ստեղծ-

ած է միմիայն մարդու զուարճութեան և օգտի համար: Աստի Գարվինը խոսում է կենդանիների և բոյսերի յառաջադիմութեան մասին միմիայն մարդու վերաբերմամբ: Նորա համար կազմուածքի ամեն մի բարւոքումը որը օգտակար է մարդուն և անվնաս է կենդանիների կամ բոյսերի համար — արդէն յառաջադիմութիւն է: Բնական չէ որ բնութիւնը սիրում է և թող է տալիս այդպիսի բարւոքումները, նա դեռ ևս իբրեւ անտես աշխատում է պահպանել յառաջադիմող կատարելագործութիւնը, որպէս զի երկրորդ անգամ չկորսնայնէ իւր ոյժերը: Գարվինի տեօրիոյով կազմուածքի ամեն մի բարւոքումը յառաջ է գալիս լաւ սկզբունքների բաժանուելով: Այս սկզբունքները յարմար միջոցի են սպասում որ զարգանան:

Նորա համար ամենայն էակ ձգտում է մերձենալ իրեն յարմար մի արարածի որպէս զի ժողանդութեան ճանապարհով ասց իւր յաջորդներին լաւ յատկութիւնները և սկզբունքները: ամենայն կենդանի որոնում է իրեն յարմարը, որպէս զի աւելի երկար կարողանայ պահպանել իւր կազմուածքի օգտակար ընդունակութիւնները: որոնք նորա ամբողջ կեանքի աշխատանքի պատուէն են կազմում: Բայց մի և նոյն ժամանակ ամենայն արարած հեռանում է իր բնան անհամապատասխան անձնաւորութեան հետ միանալու, որ մի գուցէ իւր կազմուածքի լաւ յատկութիւնները կորստին: ոչնչանան: Ամենայն արարած պատրաստ է լինամբար վարուիլ այն անձնաւորութեան հետ, որը ընդունակ է պահպանել միմիայն կազմուածքի վատ կողմերը: Աւելի լաւ է որ ոչնչանան այս վատ կողմերը, որովհետեւ բնութիւնը սիրում է որ ամենայն ինչ ընտիր լինի: Ահա այս լաւ կողմերը պահպանելու և վատ կողմերը ոչնչանալու ձգտումը Գարվինը անուանում է բնութեան ընտրութիւն: բնութեան մեծ օրէնք:

Մարդկութիւնը շատ պարտական պէտք է լինի բնութեան այս հրաշալի ոյժին: Ինչե՞ր, ինչե՞ր չչինեց, ինչե՞ր չփոփոխեց մարդս միմիայն այս ուժով: Հեռու չէ այն ժամանակը, ասում է Գարվինը, երբ որ Կ գրուանքայ կշռող բաղը սակաւագիւտ էր համարում: այն ինչ այժմ ամենահասարակ բան է տեսնել 6 գրուանքայ կշռող բաղը: Մէկը ոչխար ունի, նա ընտրում է սերնդի համար այն տեսակը, որի բուրգը բարակ է, իսկ մեացեալներին ոչնչացնում է: այնպիսի ընտրութեամբ մի քանի տարուայ ընթացքում հասնում է վերջապէս իւր նպատակին: այնպէս որ նորա ընտրած ոչխարի մի մազը 12 անգամ բարակ է որ և է հասարակ ոչխարի մազից: Ահա այնպէս է բնական ընտրութեան ոյժը: դորա համար է որ Գարվինը մեծ նշանակութիւն է տալիս այս հարցին: Գարվինը հասաւ այն համոզմունքին, որ ընտրողութիւնը կատարում է բնութեան մէջ, և մեծ մասամբ առանց մարդու կամքի: բայց մի և նոյն ժամանակ մարդս ազատ կամքով կարող է գործ դնել այս ոյժը ինչպէս որ ինքն կկամենայ: Սորանից Գարվինը հետևեցնում է թէ ընտրութեան հիմքը (принцип) բաժանուում է երեք ձևերի: Նորա կարծիքով ընտրութիւնը լինում է — բնական —, — բնական —, և — բնական —, սակայն չենք սխալուիք եթէ ասենք, որ ընտրու-

Թիւնը անբնական է և է լինում Արհեստական ընտրութեան լաւութիւնը այն է որ մարդը նորա միջոցով կարող է կենդանու կամ բոլորի ոչ թէ միայն մի անգամը, այլ նոյն իսկ ամբողջ կազմութեամբ փոփոխել և լաւացնել իւր ուղածի համեմատ օրինակ, մէկն ունի մի խումբ եզն երկայն եղջիրներով, նա չէ համեմատ իւր եզների երկայն եղջիրներին, մի և նոյն ժամանակ նա չէ կարողանում նոցանից բաժանուել որովհետեւ նոքա նորա սպրտասի աղբիւրն են Գորանից ազատուելու դժուարութիւն չկայ, նա իւր նպատակին կհասնի ~~արհեստական~~ (методический) ընտրութեան ճանապարհով, նա առանձնացնում է միմիայն կործ եղջիրաւոր եզները երկար եղջիրաւորներից և սկսում է հեռացնուել նոցա բազմացնել, և մի քանի սերնդից յետոյ՝ հասնում է իւր նպատակին։ Այս հրաշքը կատարուեցաւ արհեստական ընտրութեամբ։ Այս ընտրութեամբ է որ Անգլիացիք փոփոխել են խոզի կազմութեամբը։ Անգլիացիք համազուտ էին որ խոզի համար ռաները բոլորովին աւելորդ են, և նոքա ընտրութեան ճանապարհով այն տեղ հասցրին խոզին որ նորա ռաների կործութեան պատճառաւ փոքր գետին է քսում շրջելու ժամանակ։ Մինը կամեցաւ որ հաւերը մօրութեւն են և նա հասաւ իւր նպատակին և ահա 1860 թ. ներկայացրեց նա 57 հաւ մօրութեւն որ հաւեր։ Այս բոլորը լինում է արհեստական ընտրութեամբ։ Բնութեան այս դժից օգուտ են քաղում ոչ միայն քաղաքակիրթ ազգերը այլ նոյն իսկ վայրենիները որոնք նոյնպէս իւրեանց օգտի համեմատ ընտրութիւն են ձգում կենդանիների մէջ։ Օրինակ, Գաւնէացի հնդկացիները շատ են գրնահատում իւրեանց շները, լաւ չունը նոցա մէջ կնոջ յարգամբ ունի։

Երբ մարդը իւր հօտի ընտիրները պահում է և ոչնչացնում անպէտքները, առանց որ և է գաղափար ունենալու նորա փոփոխութեան վերայ—լինում է անգիտակցական ընտրութիւնը։ Պէտք է ասել որ անգիտակցական ընտրութեան ոյժը մարդու ձեռքին որքան որ զօրաւոր մի միջոց է, նոյնքան ևս փնտասկար։ Մարդս կարող է նորա միջոցով ոչնչացնել ամենապատուական կենդանին և նոյն իսկ մարդուն։ Անգիտակցական ընտրութեան ոյժը ի չարն գործ դնող անձինքներից մինն եղաւ և նապօրէն Ա.։ Նա աւերիչ պատերազմների մէջ կորցրեց բազմաթիւ բարձրաստակ ֆրանսիացիներ և թողեց ազգի բազմամալու կոշումը միմիայն կարճահասակներին։ Եւ դեռ զարմանում են թէ ինչո՞ւ համար ֆրանսիացիներն կարճահասակ են։ Արեւմե ընտրութիւնը պիտանացու ոյժ է զարգացած մարդու ձեռքին և փնտասկար՝ անխելք բռնակալի ձեռքին։ Այս ևս պէտք է նկատել որ ընտրութիւնը ներգործում է կենդանիի ոչ միայն արտաքին այլ ներքին յատկութիւնների վերայ ևս։ Այս հիման վերայ Գարփինը բոլորովին համոզուած է որ հիմակուայ ղեղձը նուշից կերպարանափոխուած է և եթէ այսպէս է, աւրեմ տեսէք թէ որքան ժամանակ պիտի անցնէր և որքան խոփոխութիւններ պիտի անցնէր նուշը, որ ղեղձ դարձար։ Ի հարկէ այս ևս պէտք է նկատել որ փոփոխութիւնը կատար-

ւումք մի և նոյն ժամանակ նուշի զանազան մասերումն։ Արեմն երբ որ մարդս կենդանու մի որ և է անդամը փոփոխումէ, նորա հետ փոփոխում են և նորա համապատասխան անդամները։ Այս բոլոր ասածներից երեւումէ որ ամենայն մասնիկ և կազմուածք կարող են կատարելագործուել թէ քանակութեամբ և թէ յատկութեամբ։ Աւելը բերած բոլոր փաստերի հետեւանքն այս է։ Օրդանական կեանքի թէ կենդանական և թէ բուսական միակ նպատակն է իւր սերնդի անընդհատ շարունակելը որից յառաջ է գալիս գոյութեան կոխը։ Քննեցէք բնութեան ամենաշնչին էակից սկսած մինչև նորա ներկայացուցիչը — մարդը, և գոյութեան կոխը պարզ կտեսնէք նոցա մէջ։ Նայեցէք թէ ի՞նչ է լինում ձեր վերջը։ Բոլոր կենդանականութեան ճակատին երկու ցանկութիւն է գրուած, այն է գտնել իւր համար սնունդ և ստեղծող լինել իւր նմաններին։ Մեր կարծիքով՝ երկրորդ հոգսը աւելի սաստիկ է և ամեն արգելքներին յաղթումէ իւր նպատակին հասնելու համար։ Աւել որ հիշումէ թռչունների երգը, այն տեղ լսումէ սիրոյ կոչումը, և ինչ խորամանկութիւնների չէ զիմում բնութիւնը իւր նպատակին հասնելու համար։ Ոմանք աշխատում են իրեանց գեղեցիկ ցոյց տալ, ոմանք քաջ և վեհանձն։ Թռչունների գոյնգոյն փետուրները, առիւծի բաշը, եղջիրունների եղջիրները ուրիշ բան չեն՝ եթէ ոչ հրապուրանքի նշաններ։ Մարդն այս բանում գերազանցումէ կենդանիներին։ Բնութեան այս ձգտումը — իւր ցեղը շնչահատել, իրեն նմաններ ստեղծել, խիստ կապուած է մի ուրիշ ցանկութեան հետ, այն է լուսացնել և կատարելագործել իւր սերունդը, յարմարեցնել նորան արտաքին պայմանների ազդեցութեան։

Այս երկու ձգտումները միասին վերցրած, կազմում են այն մեծ օրէնքը, որին Գարմինը անուանումէ բնորոշութիւն։ Այս օրէնքի ոյժով է, որ ամեն արարած աշխատում է իւր շրջապատող արարածների մէջ ամենալուսեւերիլ և աշխատում է իրեան յարմար զուգակից գտնել։ Թռչունների և կաթնակեր անասունների մէջ բնատնեկան կեանքը — բնահամար օրէնք է։ Բնատնեկան կեանքին համակրողներն աւելի չզարգացած և բնական դրութեան մէջ գտնուած կենդանիներն են։ Մեծ մասամբ էգ և արուն միասին են ապրում նոյն խակ ձագերը ծնելուց յետոյ, այնպէս որ նոցա միմեանից միայն մահն է բաժանում։ Բայց շատ անգամ նոցա մէջ ամուսնական կապը քանդումէ մանաւանդ թռչունների մէջ, և այս յանցանքը խիստ պատիժ է կրում։ Այսպէս պատմումէ Աուսդը մի դէպք, որ պատահած է արագելների մէջ։ Մի էգ արագիլ միշտ հաղորդակցութիւն ունէր մի արու արագիլի հետ իւր ամուսնոյ բացակայութեան ժամանակ, և միշտ իւր սիրոյ յանցանքի հետքերը անհետացնում էր մերձակայ փոքրիկ լճի մէջ լուացմամբ։ Բայց երբ մի անգամ լճակի ջուրը ցամաքիլ էր, նա տեղ չգտնելով լուացուելու, մնաց այնպէս, երբ իւր ամուսինը երկկողման բոլոր դարձաւ, նկատեց իւր ամուսնոյ յանցանքի նշանները և իմացաւ նորա անհաւատարմութիւնը։ Հեռացաւ մի երկու

ժամից յետոյ վերագործաւ իւր ընկերներով և կայահարելով սրտառու-
ցին անհաւատարիմ՝ ամուսնուն։ Թէ որչափ ճշմարիտ է այս պատմու-
թիւնը, թողունք պատասխանատուութիւնը Պաւլոսին։ Բայց այս ևս պէտք
է ասել, որ ամուսնական անհաւատարմութեան համար նոյնպիսի բար-
բարոսական պատիժներ տալիս են իւրեանց ամուսնուն վայրենիներն ևս։

Ամուսնութեան դադարները, յարաբերութիւնները և պայմանները
այնքան բազմաոտեսակ են, որքան որ մարդկային ազգը։ Ուստի եթէ
յիշելու լինինք այժմ՝ ամուսնութեան ձեերը՝ սկսեալ այն վայրենի ազ-
գերից, որոնք զուրկ են ամուսնութեան պայմաններից, այն ժամանակ եր-
կար հասարկելու եթէ գրուեն, բաւական չեն։ ուստի կրտսեականանք մի-
քանի օրինակներով։ Փոխին պատմումէ, որ այժմ՝ Եւստրալիայում կա-
րելի է գտնել այնպիսի տեղեր՝ ուր կանայք և մարդիկ առանձին խում-
բերով միմեանցից հեռու են ապրում, և միայն գարունը միմեանց փնտ-
ռումն զուգարուելու համար։ Հաւական է որ ամուսնական այս միա-
սորութեան ձեւը անյիշատակ ժամանակներում ընդհանուր եղած լինէ
ամբողջ երկրագնաիս վերայ։ Պիղինգ ճանապարհորդը պատմումէ, որ
Չիլիի հասարակապետութեան մէջ ամուսնութիւնը կատարուումէ առանց
որ և է քաղաքական կամ կրօնական ձիտակատարութեան։ Ամուսնու-
թեան այս ծայրայեղ դրութեան և այժմեան խիստ և նշանաւոր ձե-
ստացած դրութեան մէջ ահագին անդունդ կայ, որը անցնումէ ամենայն
քաղաքակրթութեան ժողովուրդ։

Մարդիկ զանազան ժամանակներում զանազան հասկացողութիւններ
ունենին ամուսնութեան վերայ։ Համարեա՞ թէ աշխարհի բոլոր մարդիկը
աշխատում էին սահմանաւորել ամուսնական յարաբերութիւնները և
այս օրէնքը ժամանակի ընթացքում հաստատուեց աւելի իդական սեռի
վերայ։ Բէյսը — վկայումէ, որ Փիւնիկեան օրէնքը կրօնի անունով ար-
գելումէր մարդուն չամուսնանալը։ Նոյնպէս Սպարտայի մէջ պատժում էին
չամուսնացողներին։ Վինը համարուում էր մարդու սեռահանութիւն,
որը ինչպէս ազատ էր նորան ընտրել և իրան սեռահանացնել, նոյնպէս
ևս ազատ էր նորան իւրեանից հեռացնելու, երբ որ անպէտք է դառնում
իւր համար։ Ռուսը համոզուած է, որ իւր կինը մի պարկ և որի մէջ ինչ
որ գնես տանումէ։ Անոջ ամենախղճալի դրութիւնը վայրենիների մէջն է։
Վինը նոցա աչքում ամենաստորին արարած է համարուում, որի վերայ
բեռնաւորութեան ևս տեսլիս բոլոր աշխատութիւնները։ Եւգանիինքը իրենց
լիզուի մէջ չունին սէր արտայայտող բառեր և սորա վերարկումք Գար-
վինը ասումէ որ «այն մարդիկ, որոնք ամուսնական կապով միանումն և
միմեանց չեն սիրում, իմ աչքին երեւում են իրրեւ շուն և կատու մի
պարկի մէջ դրած։ Նոքա փոխադարձաբար իւրեանց կեանքը թուշաւո-
րում են և ուրախ են, որ առաջ ազատուել նորանից։ Իսկական սէրը,
կեանքին կեանք է տալիս. բնութիւնն ևս պահանջումէ, որ մարդիկներին
մտեցնել միմեանց փոխադարձ սէրը։ Նա մեղ բոլորիս էլ տուած է այս

բարի զգացմունքը և շարաշար սխալումն են դոքա՛յ որոնք կարծում են թէ բորբոք սէրը և ցանկութիւնը յատուկ են միայն մի որ և իցէ ցեղի կամ կլիմայի տակ եղողներին: Մենք կարծում ենք, որ մեղանշական սերմը մեր նախամայր Եւան հաւասարապէս է բաժանել բոլորիս սրտի մէջ, առանց խտրելու հայրաւայինը հիւսիսայնից: Եթէ Դարվինի վարդապետութեան խորը թափանցենք՝ կտեսնենք որ բնութեան օրէնքը երկու նպատակ ունի — յարատեւել և կատարելագործել սերունդը: Անդանինների մէջ այս նպատակին կարելի է հասնել ընտրութեան երեք տեսակներով. իսկ մարգս որովհետեւ բարդ սոյցմանների մէջ է գտնուում, շատ անգամ աչքից թողնումէ այս նպատակը: Բէյսը հետեւեալ սոյցմաններով որոշումէ միաւորութեան բազդաւորութիւնը. «որպէս զի ասումէ նաւ ամուսնութիւնը բաղդաւոր լինի և ընտրութեան պահանջումներին բաւարարութիւն տալ, պէտքէ որ նոցա մէջ արեւակցութիւն չլինի մարմնով առողջ և նոյն իսկ ազգով միմեանցից տարբեր, այն ժամանակ անհամեմատ աւելի կաւելանայ ընտանեկան բաղդաւորութիւնը: քան թէ երբ երկու սեռերն ևս արեւակից են: Մի որ և է ժողովրդի ֆիզիքական, բարոյական և մտաւորական զարգացման անխուսափելի և էական միջոցը: համարումէ ազգերի և ցեղերի միմեանց հետ միաւորուելը և այսպիսի միաւորութիւնից յառաջ եկած սերունդը մի քանի դարից յետոյ բոլորովին փոփոխուումէ, այսինքն բնութեան ընտրութեան օրէնքով յառաջադիմումէ: Այսպէս Դարվինը հաստատումէ — Եթէ որ մի գաղթականութիւն կհաստատուի սեւ և սպիտակ մարդիկների հաւասար թուից և եթէ նոքա անխտիր ամուսնանան և եթէ բնակիչներն մի $\frac{1}{4}$ ը տարին մեռնի և $\frac{1}{1}$ ը ծնուի, այն ժամանակ 91 տարուց յետոյ մաքուր սպիտակ և մաքուր սևերի թիւը $\frac{1}{10}$ կլինէր իսկ մնացած 90 կլինէին երկուսի խառնուրդը: Ամերիկայում երեք զանազան ազգերի միաւորութիւնից յառաջ է գալիս մի ազգ, որ ժամանակով պետի յառաջանայ միւսներից: Ամերիկան զանազան ազգերի խառնուրդի տեղ է: Բրազիլիայում շնայելով որ աղետականութիւնը աշխատումէ հեռու պահել իւրեան նիգրոհիներից, նա բնականաբար աւելի է մօտենում և տարածում: Հալածել — նշանակումէ տարածել, այս ևս մասամբ բնութեան օրէնք է: Բայց Դարվինը ցաւելով ասումէ, որ Եւրոպայում հասարակութեան մեծ մասը սնապաշտութեամբ պահումէ արեւան մաքրութիւնը և միապետութիւնը: Բայց յայտնի բան է որ շարաշար սխալումն են: Արեւելքի գասակարգերի միակ կեննքը պատճառ եղաւ ժողովրդեան զարեւոր բթամտութեան, հասկացողների միապետակութեան և մտաւորական ոյժերի յետադիմութեան: այնպէս որ մարդ չէ հաւատում, որ նոցա մէջ ևս կարող է յառաջադիմութիւն լինել: Աստի այժմ դիտութիւնը բոլորովին վնասակար է համարում ժողովրդեան գասակարգերի բաժանումը և ցեղերի փոխադարձ յարաբերութեան ընդհատումն: Փակ դրութիւնը ժողովրդին թուլացնում է նորա մէջ չէ գրգռում այն ցանկութիւնները, այն զգացումները, որոնք

կարեւոր են իրական դէպքում՝ ընտրութեան պահանջմանց յարմարելու համար։ Այս երեւոյթը առաւելագոյն հաստատվում է երբ մի և նոյն ցեղի մերձաւորները միմեանց հետ միաւորում ենք։ Հիմնուելով կենդանիների և բոյսերի փորձերի վերայ, զիտութիւնը բարձրագոյն հակառակումէ տրեան խառնութեան գէմ։ Անդամիների մէջ հօր և աղջկայ միաւորութիւնը մօր և որդու կամ եղբոր և քրոջ միաւորութիւնը մի քանի սերունդից յետոյ յառաջացնում է սերնդի մէջ կարծահասակութիւն, կազմուածքի թուլութիւն և անպաւակութիւն։ Բոլոր արդար դասաստիւծները ենթադրում են որ եղբոր և քրոջ միաւորութիւնը աւելի վատ է քան թէ հօր և աղջկայ։ Բէտսը 30 տարի բազմացրեց իւր տաւարը մի միայն մերձաւոր արիւնով և հազիւ թէ չաճչացաւ ամբողջ հօտը, բայց երբ հեռեկաւ 17 տարուայ մէջ նա սկսեց խառնել իւր տաւարի մէջ նոր արիւն, նորից զարթեցան հօտի մէջ նոր ոյժ և սկսեց արագ բազմանալ։ Մերձաւոր արիւնների միաւորութեան փաստերը առաւել ներգործում է խողերի վերայ։ Ուրայտը միաւորեց խողը իւր աղջկայ և թոռան հետ մի քանի սերունդ շարունակ և ահա ինչ եղաւ։ սերունդը բոլորովին անպտուղ և կարծակեաց եղաւ և ծնվում էին այնպիսի խառնուրդ որոնք ծծել և ման գալ չէին կարողանում ինչպէս որ հորին էր։ Մերձաւորների արեւախառնութեան փաստակարարութիւնը երեւում է ամենայն յատկութիւնների վերայ ևս։

Գարվինի բերած այս բոլոր օրինակները բաւական են մերժելու Էստերլինի այն կարծիքը թէ, արեւախառնութիւնը կենդանիների մէջ ծառայում է սերնդի բարւոյնմանը, թէպէտ և Էստիրլին իրաւացի դատարար է բժշկական տեղադրութեան մէջ, բայց ինչ վերաբերում է կենդանիների և բոյսերի բարւոյնման հարցին, նա մի մանուկ է Գարվինի առաջ, նա աւսումնաւոր չէ ուրիշ մերձաւոր ազգականների մէջ եղած խառնուրդը ոչ թէ փաստակարար, այլ աւելի օգտակար է քան թէ օտարների մէջ։

Այս քաղաքիս շատ սակաւ մարդիկ պատկանում էին։ Այս հնուց արդէն նոյն իսկ վայրենի ազգերը զգուսնքով էին նայում արեւախառնութեան վերայ։ Բերինք այստեղ մի քանի օրինակներ։ Տայրուրից և Ռէյխից, Հին Հռովմայեցիները խառնութեամբ արգելում էին ամուսնութիւնը մերձաւոր ազգականների մէջ և Տուցերի աստծով ծնողաց և որդւոց մէջ պատահած արեւախառնութիւնը մահուամբ էին պատժում (Ռէյխեր 16)։ Եւրոպայի մէջ մերձաւոր ազգականների ամուսնութիւնը արգելուած էր, բայց Սպարտացիները թող էին տալիս ամուսնանալ մի մօրից և զանազան հօրերից՝ որդւոց։ Աֆրիկայի Արեմեան ամի նեգրները արգելում էին ամուսնանալ ամուսնանութիւնը մի միայն ծնողաց և որդւոց մէջ։ իսկ Արեւելեան ամի նեգրները ամուսնութիւնը արգելում էին մինչև 7րդ պորտը։ Այս օրինակներից պարզ երեւում է, որ համարեա թէ բոլոր հին ազգերը մի առանձին տակութիւն էին զգում դէպի արեւախառնութիւն։ Տայրըրը ասում էր, ամբողջ զարերի մէջ մի հասարակ փորձը կարող էր համոզել վայրենիներին, թէ որքան փաստակար է արեւախառնութիւնը և

Թէ այն փորձի ֆնաւը ստիպեց վարկենիին զանելու նորա զեմ հնարքներ, Սակայն Դարվինի բացատրութիւնը աւելի մեծ է ճշմարտութեան: Որովհետեւ արեւակից շեղող ծնողաց որդիքը, աւելի ուժեղ, առողջ և զարգացած են լինում քան թէ արեւակից ծնողաց որդիքը, ուստի օտար ընկերներին նախադասող անձնաւորութիւնները, բնական ընտրութեան պիտի միջանդիմաւորուին արագ բազմանում էին, հետեւաբար միջանդիմաւորուելի թիւը շնչում էին, և այսպէս այս բնողգումը գործնականապէս անսկզբ իւր իրաւունքը ընդհանուր եղաւ:

Արեւնախառնութիւնը՝ պահպանվում է քաղաքակրթութեան ազդերի մէջ ևս, և նորանից յառաջացած ֆնասների օրինակները շատ են: Յիշենք մի քանիսը: Փրենսիս Դեուի հաւաքեց 121 արեւակից ամուսնութիւն, որից 22 ամուսնութիւնը բոլորովին անպտուղ էին: 17ը անկանոն ծնան, իսկ մի քանի ընտանիքների աղայք, աւելորդ մասներ ունէին: 1859 թ. Ղաղարին ներկայացրեց մի քանի համբների օրինակներ, ջոյց տալու թէ որքան աղքատ է արեւակցութիւնը համբութեան վերայ: Այսպէս ի ծնէ համբ եղող 39 աղայից 6ը արեւակից ծնողաց որդիք էին: 27 համբ աղջիկներից 9 պատկանում էին արեւակից ամուսնութիւններին: Դուր հաղորդում է որ 17 արեւակից ամուսնութիւններից, որոնք 95 որդի ունէին, 44ը խիստ էին միւր խուլ, միւր թզուկ, 12ը խուլացաւ ունէին, և միայն նոցանից 37ը ունէր կատարեալ կազմութիւն: Փրանսիայի մէջ մերձաւոր ազգականների մէջ ամուսնութիւնները կազմում են բոլոր ամուսնութիւնների 2/3ը: 1840 թ. Միացեալ Նահանգների Իոյլ քաղաքի մէջ 10,000 սպիտակներից 2/3 կազմում էին համբները, իսկ 10,000 գերիներից 12 համբներն էին կազմում: որովհետեւ գերիների մէջ արեւնախառնութիւնը աւելի յաճախ էր պատահում: Ահա այսպէս են անբնական բնորութեան պատուղները:

Այս բոլոր մեր աշտանների հետեւները այն է, որ ամենայն որ թող համոզուի բնութեան այս մեծ օրէնքի աներկբայութեան մէջ, և թէ այս օրէնքով օտար անձիւքների միտարրութիւնը շատ օգտակար է և նոյն իսկ կարեւոր, իսկ մերձաւորների ամուսնութիւնը ֆնասակար է: Ասելու ահա՛նք ունեցողը թող լսէ: Ամենայն մարդ իրաւունք ունի իւր կազմութիւնը փոփոխել, ինչպէս որ կկամենայ, բայց իւր թեթեւամտութեամբ ամբողջ սերնդին ֆնասելու իրաւունք չունի:

Դ. ՃԷ. Լ. ԳԱՄԱՐԱՆԻ ԱՂԱՅԷՐԳ

ԲՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԻՆՏԵՐՆԱԿԱՆ ԲՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ